ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔ

01.01.2015թ. – 01.08.2015թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱԼԱՓԱՐՍ 2015թ.

Հարգելի Ալափարսեցիներ, 2015 թվականի յոթ ամիսների ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014 թվականի դեկտեմբերի 12-ին համայնքի ավագանին իր N 40-Ն որոշմամբ ընդունել է 2015 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները նախատեսվել են 57 մլն 756 հազար 700 դրամ, ծախսերը՝ 83 մլն 905 հազար 600 դրամ: Պակասորդը կազմել է 26 մլն 148 հազար 900 դրամ, որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին: Հողի հարկի չափը Ալափարսի վարչական տարածքում գտնվող հողերի համար կազմել է 13 մլն 300 հազար 700 դրամ: Հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել է 4 մլն 434 հազար 964 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 33 տոկոսը:

2015 թվականի բյուջեով նախատեսվել է 8 մլն 982 հազար 400 դրամ գույքահարկ, հաշվետու ժամանակաշրջանում հավաքագրվել է 3 մլն 311 հազար 584 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 37 տոկոսը:

Ակնկալվում է, որ բյուջեն մինչև տարեվերջ կկատարվի, քանի որ թե հողի հարկը և թե ավտոմեքենաների գույքահարկերը հիմնականում վճարվում են աշնանը և տարեվերջին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարին սոցիալական օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքներին տրվել են 265 հազար դրամ դրամական օգնություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Ալափարսի միջնակարգ դպրոցի շրջանավարտներին տրվել է 125 հազար դրամ՝ ավարտական հանդեսի կազմակերպման համար:

Ալափարսի համայնքի մանկապարտեզին տրվել է 4 մլն 711 հազար դրամ սուբսիդիա՝ մանկապարտեզի ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Համայնքի մշակույթի տանը գործում են պարի, սպորտային խմբերը և համայնքի գրադարանը:

Բազե Կոտայք – 2015 մարզային երիտասարդական հավաքին համայնքի ջոկատի մասնակցության համար հատկացվել է 360 հազար դրամ: «Ալափարս» ջոկատը, թվով 7 անդամ, մասնակցել է հավաքին և ստացել է պատվոգիր:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է աղբահավաք ծառայություն, որը սիստեմատիկաբար սպասարկում է համայնքի բնակչությանը, կատարվում են նաև համայնքի վարչական տարածքում գտնվող ավտոճանապարհների սանիտարական մաքրման աշխատանքներ:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարի աշխատակազմի միջոցով հսկողություն է իրականացվում համայնքում գործող առևտրի և կեցաղային ծառայությունների օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի 19 և վառելիքաքսանյութային նյութերի վաճառքի 1 թույլտվություններ, որոնցից գանձվել են համապատասխան տեղական տուրքերի գումարները:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի բյուջեի միջոցներով ներկայումս կատարվում են «Ալափարս գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնակի վերանորոգման աշխատանքներ:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքում աճուրդ-վաճառքով օտարվել են 6.496 հա գյուղատնտեսական նշանակության հողամասեր, համայնքի բյուջե է մուտքագրվել 6 մլն 519 հազար 700 դրամ: Նախատեսվում է կազմակերպել հողամասերի վարձակալության մրցույթ ս/թ հոկտեմբեր ամսին:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Ներկայումս աշխատանքներ են կատարվում համայնքի 22-րդ փողոցը և Արզականի խճուղին կապող հատվածը ասֆալտապատելու աշխատանքները սկսելու ուղղությամբ: Պարբերաբար կատարվում են համայնքի փողոցների փոսալցման աշխատանքներ: